Արձանագրություն 3

ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽՇՁԲ-25/41 **ծածկագրով Արարատ համայնքի Արարատ քաղաքի նոր սպորտդպրոցի կառուցման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված Հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի**

Ք. Արարատ 18.12.2025թ.

Ժ. 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Քենդրջյան (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝ Նունե Կարապետյան (ԳԱ)

Արտակ Ջաքարյան (ԳԱ)

Արմեն Մարտիրոսյան (ԲԱ)

Հակոբ Սեդրակյան (ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Մելքոնյան (ՄՀՄ)

1 Ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝ ընթացակարգի մասնակիցների ներկայացրած հայտերում արձանագրեց հետևյալը՝

1.1 «Վանարխ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները:

Մասնավորապես՝

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
1. Հայտով ներկայացվել է նախորդող 3 տարիների ընթացքում իրականացված նմանատիպ 2 աշխատանք, այնինչ պահանջվում էր ներկայացնել պատշաճ ձևով իրականացված նմանատիպ առնվազն 3 աշխատանք: 2. Հայտում բացակայում է ներկայացված աշխատանքներից որևէ մեկին տրված համապատասխան պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունը: 3. Հայտում բացակայում է էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) լիցենզիան: Նշված լիցենզիան պետք է ներկայացնի ընթացակարգի մասնակիցը, այլ ոչ թե ենթակապալառուն: 4. Հայտում բացակայում է ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերը՝ ԲՈՒՀ-ի կողմից շնորհված դիպլոմ, համապատասխան լիազորված մարմինների կողմից՝ հավաստագրեր, լիցենզիաներ, արտոնագրեր:

1.2 «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները:

Մասնավորապես՝

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
1. Հայտում բացակայում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված նմանատիպ աշխատանքները /առնվազն 3/: Ներկայացված աշխատանքներից ոչ պակաս 1-ը պետք է ստացած լինի համապատասխան պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունը: 2. Հայտում բացակայում է կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկատվությունը,

մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև հրավերով պահանջվող՝ մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերը՝ ԲՈՒՀ-ի կողմից շնորհված դիպլոմ, համապատասխան լիազորված մարմինների կողմից՝ հավաստագրեր, լիցենզիաներ, արտոնագրեր:

1.3 Ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջներով առաջարկել «Վանարխ» ՍՊԸ-ին և «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին 1(մեկ) աշխատանքային օրվա ժամկետում մինչև 22.12.2025թ. ժամը 18:00-ն շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ **0**:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

2.1. **ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/41** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 23.12.2025թ ժամը 11:00-ին, հասցեն ք. Արարատ, Շահումյան 34:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ **0**:

Հանձ. Նախագահ (ԳԱՊ)՝ _____ Կ.Քենդրջյան

Անդամներ՝ (ԳԱ) _____ Ն.Կարապետյան

(ԳԱ) _____ Ա.Զաքարյան

(ԲԱ) _____ Ա. Մարտիրոսյան

(ԲԱ) _____ Հ.Սեդրակյան

Քարտուղար (ՄՀՄ)՝ _____ Կ. Մելքոնյան